Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[25454]-09

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

-

**քաղ. Երևան**

**Մասնակցում էին՝**

***Խորհրդի անդամներ***

| | |
|---|---|
| Տ. Սարգսյան | ՀՀ վարչապետ (խորհդրի նախագահ) |
| Գ. Սարգսյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Գ. Դանիելյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Մ. Թումասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |

***Հրավիրվածներ***

| | |
|---|---|
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Ա. Բախշյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ |
| Ա. Ջանջուղազյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ |
| Ս. Ղոնաղչյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական վարչության պետ |
| Ս. Գագյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական վարչության առաջատար մասնագետ |
| Է. Ավետյան | ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն |
| Վ. Սիմոնյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Եվրամիության եւ միջազգային տնտեսական |

համագործակցության վարչության պետ

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի քարտուղարի նշանակում

---

(Մ. Թումասյան, Տ. Սարգսյան)

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի քարտուղար նշանակել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Թումասյանին:

2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Առաջին փուլի աշխատանքների մեկնարկ

---

(Մ. Թումասյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) ընդունել ի գիտություն Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Առաջին փուլի գնումների պլանը.

2) հավանություն տալ մրցույթային փաթեթին և մրցութային գործընթացները սկսելու նպատակով հաստատել՝

ա. ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանի և ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի առաջարկություններին համապատասխան լրամշակված՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Առաջին փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության ընտրության տեխնիկական առաջադրանքը,

բ. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Առաջին փուլի ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության տեխնիկական առաջադրանքը։

3. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթների արդյունքների գնահատման հանձնաժողովի ստեղծում

---

(Մ. Թումասյան, Տ. Սարգսյան)

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ ձևավորել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթների արդյունքների գնահատման հանձնաժողովի անհատական կազմը և այն ներկայացնել խորհրդի հաստատմանը։

4. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության (ԾԻԿ) ստեղծում

---

(Մ. Թումասյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) Ստեղծել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության (ԾԻԿ)՝ որը կղեկավարվի խորհրդի կողմից։

2) Հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ներկայացնել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման համակարգի հայեցակարգ:

3) Հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանին ներկայացնել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման համակարգի վերաբերյալ առաջարկություններ՝ հաշվի առնելով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ԾԻԳ-ի կարողությունները և դրա հնարավոր վերակազմավորելու հնարավորությունները:

5. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթ հայտարարելու մասին

---

(Մ. Թումասյան, Տ. Սարգսյան)

Հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն Է. Ավետյանին՝ հայտարարել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ԹՈՒՄԱՍՅԱՆ